ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Մ. Դավթի 87ա « 14 » ապրիլ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 300-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 31006/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆի (Հասցե՝ ԿՈՏԱՅՔ ԱՐԱՄՈՒՍ ԱՐԱՄՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Փ.,33,Տ, ՀՎՀՀ՝ 43233533, ՀԾՀ 1309930341) չկատարված հարկային պարտավորությունը 30.09.2022թ-ի դրությամբ կազմում է 18534 դրամ, այդ թվում հարկ՝ 17400 դրամ, տույժ՝ 1134 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 16.03.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ 11.09.2021թ. օտարվել է 18.05.2021 թվականին ձեռք բերված OPEL ZAFIRA 1.8L մոդելի 2000 թվականի արտադրության 116 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը, որի պայմանագրային արժեքը կազմել է 700000 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոշվում է Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերությամբ: Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Օրենսգրքի 150--րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից:

Ֆիզիկական անձ ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆի կողմից ավտոմեքենայի օտարումից եկամտային հարկը չի հաշվարկվել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում 30.09.2022թ-ի դրությամբ կազմում է 18534 դրամ, այդ թվում հարկ՝ 17400 դրամ, տույժ՝ 1134 դրամ, որն առաջացել է 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՑ գանձել **18534** դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

30.09.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	17400	1134	-	**18534**	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտ անձի անուն,ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան, հեռ. 010-30-91-91 /91-36/: